Պարույր Սևակ

Allo Մայակովսկի

Եվ արդ ոռնում է պատերազմը ծովից մինչև ծով,
Լիզելով սահմանաքարերը մեր կարմիր,
Անցնելով համայն Եվրոպայի միջով
Որպես հրեշ՝ քրմամարմին...
Որ զոհի իր կրքերին,
Իր ոսկեծին կուռքերին մոլար,
Կարծելով, որ կընդունենք այդ ինչպես գերի,
Կամ ինչպես Իսահակն առասպելյալ...
Թքած բոլոր Իսահակներին տխմար,
Աբրահամներին բոլոր, Ադամներին,
Ուրնաքայի՝ սին պսակներին արցունքանա
Իրեն՝ աստծո նեխած ատամներին...
Մեր հոգին աստծո հանդեպ Սոդոմ, Գոմոր-
Նախապատիվ տվող բարուբային,
Տիրոջ հանդեպ՝ խառնած ծաղր ու յումոր
Պահած մաղձն իր հոգու՝ ամպային...
Կկովենք մենք համառ ջանքերով
Մինչև վերջին կաթիլը մեր արյան,
Որ ազատությունը սեփական ոտքերով
Շրջի երկրագնդում բազմադարյան,
Որ փախած մի անգամ կռատնից,

Ինչպես Սանասարը մեր դյուցազուն
Առյուծ Մհեր ու Դավիթներ ծնի
Աշխարհի ամեն մի մասում
Մեր երկիրը կարմրակարմիր,
Կտրելով հրեշի զարհուր լեզուն,
Լեզուն հրեշի քրմամարմին...
Եվ ի՞նչ է կյանքը, թքած անմիտ կյանքին,
Երբ կնոջ պես պիտի կրես քեզ հետ միշտ
Բռնության լակոտը՝ նստեցրած կոնքիդ,
Երբ պիտի ուտես՝ տանջանք, արտասվես՝ վիշտ:
Գիտի այդ մեզնից անգամ յուրաքանչյուր պիոներ,
Զգում է այդ անգամ հոկտեմբերիկը ժիր,
Բռնության հանդեպ միշտ անողոք, աններ,
Ազատությամբ սնված,- այդ միշտ անխախտ հիշիր-
Եվ մենք կյանքի մարդիկ, որ կյանքն ենք վայելել,
Այսօր մարտիկ դարձած զոռ բախման ենք ելել,
Որ պաշտպանենք մաքուր
Հողը մեր Միության,
Չդառնանք կերակուր
Վայրագ մոլիության...
Ու շրջում է մահը
Այսօր ողջ ֆրոնտով,
Մերթ այրուձին նստած,
Մերթ սեփական ոտով,
Ու գտնում է նա մեզ
Ժպտադեմ ու անդող՝
Թքած իր երեսին,
Իր ամրոցը քանդող...
Մենք փարվել ենք կյանքին
Ազատությամբ միայն.

Պետք չէ երբեք կրել
Ազատության մումիան:
Նա պետք է մարմնանա
Մեր մկանուտ ձեռքով,
Մեր բազուկով անահ,
Մեր երկնքի ներքո,
Մեր աստղերի ներքո,-
Ու վայելենք պիտի
Նրան խրոխտ երգով
Մեր սրտերով արի,
Մեր սրտերի բերքով,
Խորությամբ մեր դարի,
Մեր արևով կարմիր,
Մեր բիլ երկինքներով,
Գալիքնահունձ հերկով
Եվ անգո, անմարմին
Տիեզերքով...
Դրա համար ենք մենք
Ահա ելել ոտի,
Որ աշխարհը մեր նոր
Կապի մեջքին իր սեգ
Ծիածանը գոտի,
Կրի արևը՝ թագ,
Բիլ երկինքը՝ հովհար,
Տիեզերքը անտակ՝
Ջբոսավայր...

.....

.....

Սակայն չկաս դու, չկա և ուրիշը...
Պոեզիայի դերը չունի իր կերտողը,
Թեկուզ հավաքված է վարագույրն ու կուլիսը,
Չի երևում սակայն արժանավույն քերթողը...
...Այստեղ, ահա, պոե՛տ, սառչում է շրթներիս
Համարձակությունը, որպես ջրասառույց,
Եվ ինչ ցանկանում է սիրտս, ների՛ր,
Գուցե անմիտ երազանք է՝ եթերակառույց,
Որի հանդեպ միշտ ուղեղս լախտ է հանել,
Ուղեղս միշտ մնացել է ամբաստանող...
Բայց հիշո՞ւմ ես, շատերն ամբաստանել
Եվ քշել է նրանց ուրագանը տատանող
Մինչև Հոկտեմբերը մեր կարմրակարմիր...
Թերևս քշվելու արժան է և իմ ամբաստանող միտքը,
Գուցե իրձն այդ չունի դեռ միս ու մարմին...
Բայց, ինչ որ է՝ կասեմ այն բարձրաձայն, քանզի նրա հետքը
Արնածիր է իմ սրտում, և ճնշող է, ինչպես հսկա քար մի,
Գիտե՛ս, կամենում եմ դողացող շրթներով շշնջալ,
Շշնջալ ականջիդ, կամացուկ, որ ոչ ոք չլսի,
Որ հետո երբ անզոր լինեմ, չծաղրեն ինձ, չխնդան,
Ինչպես խեղկատակի վրա՝ պարսկական Մեջլիսի:

.....

.....

Օ՜, դո՛ւ, անհամարձակ շարժում՝ երկմտում, հեռացի՛ր,
Սատանայի գիրկը, անկա՛րգ...
Իսկ դու լսիր, պոե՛տ, հայցը այս նորածին
Այս թոթովող մանկան:
...Ի՞նչ է հայցում քեզնից նա, ինքն էլ չգիտե,

Մի անանուն, անկամ խոկում է այդ միայն,
Այն , որ մշուշ է լոկ, ինքդ ահա դիտիր,
Այն, որ բիլ երկինք է, դիտիր հենց այն:

.....

.....

Դի՛ր քո ձեռքն այդ դեպքում իմ մատաղ ճակատին,
Քո բազուկով գրկիր իրանը պատանուս,
Քո գոռ շնչով լցրու թոքերն իմ աղքատիկ,
Կամքիդ ուժով կամքս չտեսնի տատանում:
Դի՛ր քո սիրտը կրքոտ,- թեև պակաս չէ իմ
Սիրտը՝ կատաղությամբ մոլուցքում մխրճված,-
Կրծքավանդակիս տակ... Արհամարհանքդ հին
Աչքերիս քուրայում բոցկլտա թող թրծված,
Անհողմնահար մնա, մնա հար մշտառկա...
Եվ մոլեգնած խոլ ձիդ թող ելնի արշավի
Հոգուս ստեպներում անծայրածիր այնքա՛ն,
Այնքան արգասավոր և բազմաբարիք...
Թող որ այսօրվանից ես երգեմ քո ձայնով,
Քո երգերի թափի ժառանգորդը լինեմ,
Լինեմ գալիքների աստղագուշակ, ձայնող,
Գալիք ողողանջների սրտում ապավինեմ,
Սիրտս պարզած թովիչ ողողանջների ձայնին՝
Անցնեմ որպես դղիրդ համայն երկրագնդով,
Տված իմ նեկտարը կյանքի խոր հնձանին՝
Դառնամ հոգիները գոտեպնդող...
Սիրտս՝ ծնծղա-զարկի, հոգիս՝ թմբուկ-թնդա,
Ձայնս՝ ամպրոպ-շաչի եզերքից մինչ եզերք,
Երգս հեռուներում մոտիկից հոնդա,

Մոտիկ՝ հեռուներից արևի պես կիզե...
Եվ հանդարտված հոսի խաղաղ ու լայնահուն
Դաշնությամբ մի, անցած փոթորկին միացած,
Գալիք հեռուների բիլ երկնակամարում
Ժպտա որպես պայծառ, երփներանգ-ծիածան...